ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27 դեկտեմբերի, 2018թ. Երևան

36 դրամաշնորհ հանձնվեց քաղհասարակության կազմակերպություններին և կոալիցիաներին

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» (ԿԵՀ) ծրագրի շրջանակում այսօր՝ դեկտեմբերի 27-ին, 36 դրամաշնորհների հանձնման համաձայնագիր ստորագրվեց քաղհասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և ՔՀԿ կոալիցիաների հետ:

Ծրագրի ղեկավար և Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը նշեց, որ մինչև 5.5 միլիոն դրամ արժողության 29 դրամաշնորհ հանձնվում է ծրագրի շրջանակում ստեղծված ՔՀԿ ինկուբատորի մասնակից կազմակերպություններին՝ համայնքային ծարգրերի իրականացման նպատակով: Եվ մինչև 8.5 միլիոն դրամ արժողության դրամաշնորհներ են հանձնվում ԿԵՀ կողմից արդեն իսկ դրամաշնորհային ծրագրեր իրականացնող 7 ՔՀԿ կոալիցիաներին՝ իրենց կարողությունների զարգացման նպատակով:

«29 դրամաշնորհներն ուղղված են հիմնականում հանրապետության տարբեր համայնքներում ծրագրերի իրականացմանը: Մենք ակնկալում ենք փոփոխություններ, որոնք կկատարվեն ձեր աշխատանքի շնորհիվ՝ կառավարության և ՏԻՄ-երի հետ համագործակցության, հանրային քաղաքականությունների վրա ազդելու միջոցով: Իսկ կոալիցիաներին ուղղված դրամաշնորհները թույլ կտան նորաստեղծ կամ արդեն իսկ գործող կոալիցիաների կարողություններն այնպես ուժեղացել, որ նրանք առավել ազդեցիկ լինեն քաղաքականությունների մշակման, կառավարության հետ կառուցողական երկխոսության հարցում»,- նշեց Կարեն Զադոյանը:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի միջազգային օգնության/համագործակցության պաշտոնյա Պաուլիոս Ստրելսիունասը իր ողջույնի խոսքում նշեց.

«Մենք հասկանում ենք, որ բավականին մեծ աշխատանք է կատարվել Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից և ես ցանկանում եմ օգտվել առիթից և շնորհակալություն հայտնել 2018-ին կատարված այդ աշխատանքի համար: Իհարկե, ես նաև իմ շնորհակալությունն եմ հայտնում բոլորիդ դաշտային աշխատանքների համար: Մեր կարծիքով, ամենամեծ փոփոխությունը դուք եք իրականացնում: Մենք ուրախ ենք Հայաստանում նման աջակցություն ունենալու համար: ԵՄ-ն վստահ է, որ փոփոխություններ չեն կարող լինել՝ առանց ՔՀԿ-ների ներգրավման»,- ասաց նա:

Այսօր տրամադրված դրամաշնորհների ընդհանուր արժեքը կազմում է մոտ 220 միլիոն դրամ: Նախատեսվում է, որ հաջորդ տարեսկզբին կտրամադրվի ևս 2 դրամաշնորհ ՔՀԿ կոալիցիային (ընդհանուր շուրջ 17 մլն դրամ արժողության):

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Հիշեցնենք, որ այս տարվա մայիսի 31-ին ՔՀԿ 9 կոալիցիայի ծրագրի շրջանակում տրամադրվել է մինչև 25 միլիոն դրամ արժողության 9 դրամաշնորհ՝ ԿԵՀ թիրախային ոլորտներում ծրագրերի իրականացման նպատակով (ընդհանուր շուրջ 225 միլիոն դրամ):

Այսօր դրամաշնորհի ստացած բոլոր ՔՀԿ-ների ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպի» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ են տրամադրվել ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան:

Աստղիկ Կարապետյան
Հանրային կապերի համակարգող
Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝ info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am